**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*21 մարտի 2024թվականի N 349*

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Ռոմեր Ասատրյանի 2024 թվականի փետրվարի 29-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամասի թիվ 45 տան բնակիչ Ռոմեր Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 1397178, տրված՝ 2005 թվականի սեպտեմբերի 12-ին / Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամաս 45 հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Մ.Ավետիսյան փողոց 22 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

21 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*21 մարտի 2024թվականի N 350*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ և 12-րդ կետերի և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի, հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրականացման, ժամը 24-00-ից հետո աշխատելու, հեղուկ վառելիքի վաճառքի, տեխնիկական հեղուկների վաճառքի, արտաքին գովազդի տեղադրման և թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

21 մարտի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. մարտի 21 -ի
N 350 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ «Վարդուհի Գալստյան Միհրանի» | Ք. Հրազդան, Վանատուր 405 | Ք. Հրազդան, Վանատուր 405 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2 | Ա/Ձ «Վարդուհի Գալստյան Միհրանի» | Ք. Հրազդան, Վանատուր 405 | Ք. Հրազդան, Վանատուր 405 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3 | Ա/Ձ «Ժենյա Եղիազարյան Մուկուչի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, շենք 211/38 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, շենք 105 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4 | Ա/Ձ «Ժենյա Եղիազարյան Մուկուչի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, շենք 211/38 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, շենք 105 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 5 | Ա/Ձ «Արմեն Մարտիրոսյան Սամվելի» | Գեղարքունիքի մարզ Դդմաշեն 11/15 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 106 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6 | Ա/Ձ «Արմեն Մարտիրոսյան Սամվելի» | Գեղարքունիքի մարզ Դդմաշեն 11/15 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 106 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 7 | Ա/Ձ «Հովիկ Մարգարյան Ռուբիկի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 43/80 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 43-ին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 8 | Ա/Ձ «Հովիկ Մարգարյան Ռուբիկի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 43/80 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 43-ին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | արտադրատեսակների նմանակների վաճառք | | |
| 9 | Ա/Ձ «Անուշ Բալաբեկյան» | Ք. Հրազդան, Չարենցի նրբ 20 | Ք. Հրազդան, Շահումյան 4/5 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 10 | Ա/Ձ «Անուշ Բալաբեկյան» | Ք. Հրազդան, Չարենցի նրբ 20 | Ք. Հրազդան, Շահումյան 4/5 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 11 | «Միքս Սուպերմարկետ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Սպանդարյան փ. շենք 9 | Ք. Հրազդան, Սպանդարյան փ. շենք 9 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 12 | «Միքս Սուպերմարկետ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Սպանդարյան փ. շենք 9 | Ք. Հրազդան, Սպանդարյան փ. շենք 9 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 13 | Ա/Ձ «Էդիկ Նուրիջանյան» | Ք. Հրազդան, Ջրառատ 570/1 | Ք. Հրազդան, Ջրառատ 570/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 14 | Ա/Ձ «Էդիկ Նուրիջանյան» | Ք. Հրազդան, Ջրառատ 570/1 | Ք. Հրազդան, Ջրառատ 570/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 15 | «Վոդվայն» ՍՊԸ | Ք. Հրազդան, Վանատուր 473 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 104 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 16 | Ա/Ձ «Մանուկ Միրաքյան Շահենի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, շենք 258/13 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 80/1-82 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 17 | Ա/Ձ «Մանուկ Միրաքյան Շահենի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, շենք 258/13 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 80/1-82 | Հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 18 | Ա/Ձ «Սուսաննա Մանուկյան Անդրանիկի» | Լոռու մարզ Պրիվոլնոյե 1/62 | Ք. Հրազդան, Մ. Բաղրամյան 5-րդ փ., թիվ 26/1 | Հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 19 | Ա/Ձ «Գարիկ Մնացականյան Վարդանի» | Ք. Հրազդան, Ավետիսյան 51 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 36 | Տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 20 | Ա/Ձ «Գոհար Եգորյան Արշավիրի» | Ք. Հրազդան, Չարենցի փողոց 13 20 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Ա-8, Զ. Անդրանիկի պ/ | Հեղուկ վառելիքի վաճառք | Լցակայան՝ հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 21 | Ա/Ձ «Գոհար Եգորյան Արշավիրի» | Ք. Հրազդան, Չարենցի փողոց 13 20 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Ա-8, Զ. Անդրանիկի պ/ | ժամը 24-00-ից հետո աշխատանք | Լցակայան՝ հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 22 | «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ | Ք. Երևան, Մոսկովյան 35 | Ք. Հրազդ[illegible]ն, Կենտրոն թ-ս, Օգո[illegible]ոսի 23, Հրազդան մ/6 | Արտաքին գովազդի տեղադրում | 6,6 քառ/մ | 2024 թվականի տարվա համար |
| 23 | Ա/Ձ «Աստղիկ Հարությունյան Ռոբերտի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 32/55 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Օգոստոսիվ23 | Արտաքին գովազդի տեղադրում | 3,3 քառ/մ | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 24 | «Թեսթիդ » ՍՊԸ | Ք. Երևան, Ավանեսովի 8/1, 16 բն. | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 4-րդ փ., 24/1 | Արտաքին գովազդի տեղադրում | 10 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |
| 25 | «Պրոֆտեստ » ՍՊԸ | Ք. Երևան, Ե. Կողբացի 28/72 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Պուրակային 38 | Արտաքին գովազդի տեղադրում | 4 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |
| 26 | «Միքս Սուպերմարկետ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Սպանդարյան փ. շենք 9 | Ք. Հրազդան, Սպանդարյան փ. շենք 9 | Արտաքին գովազդի տեղադրում | 42 քառ/մ | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 27 | Ա/Ձ «Ալեք Հովհաննիսյան» | Ք. Հրազդան, Ռ. Միքայելյան2/32 | Ք. Հրազդան, Սպանդարյան 10 | Արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |
| 28 | Ա/Ձ «Գոհար Եգորյան Արշավիրի» | Ք. Հրազդան, Չարենցի փողոց 13 20 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Ա-8, Զ. Անդրանիկի պ/ | Արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի տարվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*21 մարտի 2024թվականի N 351*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման 3-րդ կետի պահանջի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը համաձայն N 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի 2022 թվականի հունվարի 31-ի №54 որոշման 1-ին կետը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

21 մարտի 2024թ.
ք.Հրազդան

**Հավելված N 1**
Հրազդան համայնքի ղեկավարի
2024թ. մարտի 21-ի N 351 որոշման

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. *Հանձնաժողովի նախագահ* - համայնքի ղեկավարի տեղակալ
2. *Հանձնաժողովի նախագահի տեղակալ* - համայնքի ղեկավարի օգնական
3. *Հանձնաժողովի քարտուղար* - քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-20)
4. *Հանձնաժողովի անդամ* - գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնի պետ
5. *Հանձնաժողովի անդամ* - ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
6. *Հանձնաժողովի անդամ* - քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ,
7. *Հանձնաժողովի անդամ* - եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ
8. *Հանձնաժողովի անդամ* - կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ

**Հավելված N 2**
Հրազդան համայնքի ղեկավարի
2024թ. մարտի 21-ի N 351 որոշման

# Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համայնքային հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) գործառույթները, աշխատանքների կազմակերպման կարգը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, միջազգային պայմանագրերով և սույն աշխատակարգով:

3. Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) Կազմակերպել համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման գործընթացը.

2) համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների ընդհանուր հաշվառումը.

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով:

6. Հանձնաժողովի նիստեր հրավիրում է հանձնաժողովի նախագահը կամ տեղակալը՝ նախագահի բացակայության դեպքում:

7. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա տեղակալը:

8. Հանձնաժողովի կողմից գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

9. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) Կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3) գնահատվում է գույքի պատճառված վնասի չափը:

10. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

11. Տեղեկատվությունը ներառում է՝

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) դեպքի վայր մեկնած փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի կազմը՝ անձնական տվյալները.

4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

12. հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.

3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.

4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

13. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմում՝ ըստ ողղությունների, ընդգրկվում են արտակարգ իրավիճակների, առողջապահության, գյուղատնտեսության, կապի և տրանսպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները:

14. Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով: Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիրզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակվում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:

15. Հանձնաժողովի նիստերի ժամանակ ընդունված ակտերը և կազմված արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի անդամները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 մարտի 2024թվականի N 352*

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի 215-Ն որոշումը՝

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1. Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսային մասում ՝ 10 բաժնի 7 խմբի 1 դասի 51 «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» ծրագրի 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածում «15000.0» թիվը փոխարինել «14000.0» թվով, 4726 «Հուղարկավորության նպաստներ» հոդվածում «0» թիվը փոխարինել «1000.0» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 մարտի 2024թվականի N 353*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Արարատ Վլասյանի 2023 թվականի հունվարի 19-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի հունվարի 5-ի թիվ 20 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2024 թվականի մարտի 19-ի N 1405 գրավոր առաջարկությունը և Արարատ Վլասյանի կողմից տրված 2024 թվականի մարտի 20-ի թիվ 2393 գրավոր համաձայնագիրը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 208/4 հասցեում գտնվող՝ 32.92քմ արտաքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 208/4 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 32.92քմ արտաքին մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16022024-07-0028, գաղտնաբառ՝ GAPKMZBEG6SX/ գինը սահմանել 56 000 /հիսունվեց հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 32.9քմ մակերեսով հողամասը՝ 96 000 /իննսունվեց հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 208 շենքի թիվ 33 բնակարանի բնակիչ Արարատ Վլասյանին (այսուհետ գնորդ):

3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը 900125001140 գանձապետական հաշիվներին:
4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*22 մարտի 2024թվականի N 354*

### ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Բորիս Մարտիրոսյանի 2021 թվականի նոյեմբերի 17-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 85 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2024 թվականի մարտի 19-ի N 1406 գրավոր առաջարկությունը և Բորիս Մարտիրոսյանի կողմից տրված 2024 թվականի մարտի 20-ի թիվ 2394 գրավոր համաձայնագիրը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 114/1 հասցեում գտնվող՝ 50.93քմ արտաքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 114/1 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 50.93քմ արտաքին մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05022024-07-0129, գաղտնաբառ՝ BLFD6CC9VWMY/ գինը սահմանել 101 000 /մեկ հարյուր մեկ հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 26.2քմ մակերեսով հողամասը՝ 117 000 /մեկ հարյուր տասնյոթ հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 114 շենքի թիվ 33 բնակարանի բնակիչ

Բորիս Մարտիրոսյանին (այսուհետ գնորդ):
3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը 900125001140 գանձապետական հաշիվներին:
4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 մարտի 2024թվականի N 355*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Անժիկ Գասպարյանի 2024 թվականի մարտի 11-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 63 շենքի թիվ 52 բնակարանի բնակիչ Անժիկ Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2221976, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին/ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամասի Պուրակային փողոց, 6-րդ նրբանցք 13:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 մարտի 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 մարտի 2024թվականի N 356*

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Գնել Եղիազարյանի 2024 թվականի մարտի 20-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 4-րդ թաղամսի թիվ 75 տան բնակիչ Գնել Եղիազարյանին ժառանգության իրավունքով փոխանցված (ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2024 թվականի մարտի 19-ին, տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ N 1107, ժառանգական գործ N 75) Կոտայքի մարզի Քաղսի գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 4-րդ թաղամաս 75:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

25 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

*25 մարտի 2024թվականի N 357*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ և 12-րդ կետերի և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի, հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրականացման, արտաքին գովազդի տեղադրման թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 մարտի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. մարտ 25 -ի
N 357 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ «Մուշեղ Վարդանյան » | Ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 158 | Ք. Հրազդան, Շահումյան 158 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2 | Ա/Ձ «Մուշեղ Վարդանյան » | Ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 158 | Ք. Հրազդան, Շահումյան 158 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3 | Ա/Ձ «Քրիստինե Մարտիրոսյան Մարատի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23/26 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23/26 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4 | Ա/Ձ «Քրիստինե Մարտիրոսյան Մարատի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23/26 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23/26 | Հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 5 | «Պրոֆգործ» ՍՊԸ | Ք. Սևան, Ելենովկա 10/21 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 20 | Արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի մարտ և ապրիլ ամիսների համար |
| 6 | Ա/Ձ «Մանուկ Հայրապետյան Արմենի» | Գ. Լեռնանիստ, 2-րդ թղմ, տուն 41 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23 թիվ24 | Արտաքին գովազդի տեղադրում | 1 քառ/մ | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

*25 մարտի 2024թվականի N 358*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 523 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 10-ի «Հրազդան համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու մասին» N 523 որոշման բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

25 մարտի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի
ղեկավարի 2024 թվականի
մարտի 25-ի N358 որոշման

«ՈՐՈՇՈՒՄ
10 հունիսի 2022 թվականի N 523

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 384 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի 4-րդ պարբերությամբ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 10-ի «Հրազդան համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու մասին» N 523 որոշման բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
1.Ստեղծել Հրազդան համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ.
1) կապի ծառայություն
2) ինժեներական ծառայություն
3) բժշկական ծառայություն
4) տրանսպորտային ծառայություն
5) Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն
6) էներգետիկայի ծառայություն
7) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն
8) հասարակական կարգի պահպանման ծառայություն
9) կոմունալ-տեխնիկական ծառայություն,
2.Նշանակել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետեր՝
1)կապի ծառայության պետ՝ «Թիմ-Տելեկոմ Արմենիա ՓԲԸ» Հրազդանի տեղամասի պատասխանատու
2)ինժեներական ծառայությոան պետ՝ քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ
3)բժշկական ծառայության պետ՝ «Հրազդանի բժշկական կենտրոն ՓԲԸ» բուժգծով փոխտնօրեն
4)տրանսպորտային ծառայության պետ՝ տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ
5)Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ՝ Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

6)էներգետիկայի ծառայության պետ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի մատակարարման և շինարարության վարչության պետ

7)բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ՝ գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնի պետ

8)հասարակական կարգի պահպանման ծառայության պետ՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի պետ

9)կոմունալ-տեխնիկական ծառայության պետ՝ Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժնի պետ:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 31-ի «Հրազդան համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու մասին» N 53 որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:»

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 մարտի 2024թվականի N 359*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հայկ Մկրտչյանի 2024 թվականի մարտի 18-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Առինջ գյուղի Ա. Մնացականյան փողոց թիվ 55 տան բնակիչ Հայկ Մկրտչյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2024 թվականի մարտի 14-ին, տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 1640, ժառանգական գործ 485(2021)/ Հրազդան քաղաքի Աղբյուրակ թաղամասի տարածքում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-001-0096-0017) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 4-րդ փողոց, 4-րդ նրբանցք 9:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

*25 մարտի 2024թվականի N 360*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 13-ի N 56 որոշումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 22/1 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N2639783, տրված՝ 23 դեկտեմբերի 2009 թվականին) 1706,61 քառակուսի մետր մակերեսով նախադպրոցական ուսումնական հաստատության շենքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հրազդանի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 25 (քսանհինգ) տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

25 մարտի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 մարտի 2024թվականի N 361*

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ և 12-րդ կետերի և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հայտերը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համայնքի վարչական տարածքում գործող առևտրի օբյեկտներում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի, հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրականացման, արտաքին գովազդի տեղադրման թույլտվություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 մարտի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. մարտ 26 -ի
N 361 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ «Հակոբ Դարմանյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 25/4 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 33, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2 | Ա/Ձ «Հակոբ Դարմանյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 25/4 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 33, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3 | Ա/Ձ «Լիլիթ Հովհաննիսյան Իգիթի» | Քաղսի 8-րդ փ., տուն 2 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 57 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4 | Ա/Ձ «Լիլիթ Հովհաննիսյան Իգիթի» | Քաղսի 8-րդ փ., տուն 2 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 57 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ա/Ձ «Ռաշիդ Ներսիսյան Աշոտի» | Քաղսի 10-րդ փ., տուն 12 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 20 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6 | «Սմայլ Սիստեմս» ՍՊԸ | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 16/18 | Ք. Հրազդան, Սպանդարյան 61 | Արտաքին գովազդի տեղադրում | 4 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |
| 7 | Ա/Ձ «Եպրաքսյան Մխիթարյան Անդրանիկի» | Ք. Աբովյան | Ք. Հրազդան, Մ/շ Բաղրամյան թ-ս 5-րդ փ., 1-ին նրբ. | Արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |
| 8 | Ա/Ձ «Նորայր Ավագյան» | Ք. Հրազդան, Չարենցի 9 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի պող. 6 | Արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |
| 9 | Ա/Ձ «Գենադի Շամխալյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 89/9 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի պող. 107/3 | Արտաքին գովազդի տեղադրում | 1 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 մարտի 2024թվականի N 362*

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 7-ի 215-Ն որոշումը՝

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսային մասում ՝ 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ‹‹Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում›› ծրագրի 4111 ‹‹Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածում ‹‹340 127.162›› թիվը փոխարինել ‹‹338 627.162›› թվով, 4222 ‹‹ Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր›› հոդվածում‹‹0›› թիվը փոխարինել ‹‹1500.0›› թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 մարտի 2024թվականի N 363*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Ռաֆիկ Ավետիսյանի 2024 թվականի հունվարի 26-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023NDUYEE ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի փետրվարի 12-ի թիվ 57 մասնագիտական եզրակացությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0507-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 104/16:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 104 շենքի 20 բնակարանի բնակիչ Ռաֆիկ Ավետիսյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 104/16 հասցեում գտնվող 29.7քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 29.7քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*27 մարտի 2024թվականի N 364*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱՆԿՈՒՂԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 1-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023DVJFJ8 ծածկագիրը և Գոռ Գալստյանի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 58 շենքի թիվ 37 բնակարանի բնակիչ Գոռ Սմբատի Գալստյանի կողմից Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոց 71/2 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16122022-07-0122, գաղտնաբառ՝ 9H9MSN6D3HWJ) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 309.85քմ արտաքին մակերեսով կիսանկուղը՝ օրինականացման վճարը սահմանել 1 037 000 (մեկ միլիոն երեսունյոթ հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:
2.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ

պահանջելու իրավունք:
3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

*27 մարտի 2024թվականի N 365*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Վանուշ Առաքելյանի լիազորված անձ Արթուր Առաքելյանի 2024 թվականի մարտի 11-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Պուրակային փողոցի թիվ 2 տան բնակիչ Վանուշ Առաքելյանին պատկանող / Ժողովրդական պատգամավորների Հրազդանի Քաղխորհրդի գործկոմի 1992 թվականի դեկտեմբերիի 25-ի արձ.թիվ. 15 քաղվածք/ Հրազդան քաղաքում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-001-0546-0013-hg) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամասի Պուրակային փողոց 4/1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 մարտի 2024թվականի N 366*

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Արտակ Բաբախանյանի 2024 թվականի մարտի 21-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Մ. Սարյան փողոցի թիվ 4 տան բնակիչ Արտակ Բաբախանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող / սեփականության իրավունքի գրանցման վկայական 1788425, տրված՝ 2005 թվականի հունվարի 13-ին/ Հրազդան քաղաքի Չարենցի նրբանցք N 15 հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ե. Չարենցի փողոց, 1-ին նրբնացք 15 հասցեով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 մարտի 2024թ.
ք.Հրազդան